

**«ԳԵՐԱՆՂԻ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա.

Երկրագործական գործիքների շարքում կարևոր տեղ է գրավում գերանդին, որը նախատեսված է հնձի կամ քաղի համար:

«Հայերեն արմատական բառարանում» գերանդի «մեծ մանգաղ. 2. փոքր մանգաղ. յօտոց» բառը ստուգարանված չէ: Նշում չկա նաև փոխառություն լինելու մասին¹: Գ. Ջահուկյանն այն դասում է կասկածելի ստուգարանություն ունեցող բառերի շարքին²: Ըստ «Նոր Հայկազեան բառարանի»՝ բառը ծագում է «գերան» ձևից³: Նույն ձևից է բխեցնում բառը նաև 2010 թ. հրատարակված «Հայերենի ժառանգած բառապաշարի ստուգարանական բառարանը»⁴:

Հայերենից բառանունը փոխառել են մի շարք լեզուներ: ՀԱԲ-ը նշել է քրդերենն ու լազերենը⁵: Լազերենում բառանվան՝ հայերենից փոխառյալ լինելը նշել է նաև Գ. Ղափանցյանը⁶: Բառը հայերենից են փոխառել նաև թուրքերենն ու ադրբեջաներենը⁷:

Բառն ավանդված է V դ. հայ մատենագրության մեջ՝ «Զի և ոչ ինչ այլ իմիք նման չէին այն նորոգ իրք, բայց եթէ յորժամ ժիր մշակք քաջ սուր մանգաղաւ և գերանդեաւ զխոտ հարկանիցեն»⁸, «... զի եթէ խոփ և գերանդի և մանգաղ ոք

¹ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Ա, Ե., 1971, էջ 541:

² Տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 212:

³ Տե՛ս Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրամէկեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. Ա, Ե., 1979, էջ 545:

⁴ Տե՛ս Martirosyan H. K. Etymological dictionary of the Armenian Inherited Lexicon (Leyden Indo-European Etymological Dictionary Series, 8), Leyden, Boston, 2010, p. 209:

⁵ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 541:

⁶ Տե՛ս Капанцян Гр. О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков, Ե., 1952, с. 33.

⁷ Տե՛ս Dankoff R. Armenian Loanwords in Turkish, Wiesbaden, 1995, p. 35. Բառանունը լայնորեն գործածվել է թուրքերենի բարբառներում. տե՛ս Türkiye’de Halk Ağzından Derleme Sözlüğü (այսուհետև՝ DS), c. VI, Ankara, 1972, s. 1999 (gerenti «փոքր գերանդի» /Տրապիզոն/), DS, c. VIII, Ankara, 1975 s. 2753 (kerendi /Տրապիզոն, Գյումուշհանե, Ռիզե/, kerenti /Ամասիա, Տրապիզոն, Ռիզե, Կարս/kerimti /Տրապիզոն/, kerindi /Կարս, Էրզրում, Էրզինջան, Կայսերի/, kerinti /Օրդու, Մարաշ, Տրապիզոն, Էրզինջան, Սվազ/, «գերանդի» /Տրապիզոն/՝ նշված բոլոր վայրերում՝ «գերանդի» նշանակությամբ, Կայսերիում kerenti-ն՝ «երկապրի մանգաղ» նշանակությամբ), s. 2878 (kirinti «գերանդի, մանգաղ» /Օրդու, Գիրեսուն/) և այլն: Փոխառված է նաև մարանդի (merendi «փոքր գերանդի» /Կարս/) բառը. տե՛ս DS, c. IX, Ankara, 1977, s. 3167.

⁸ Ղազարայ Փարպեցույ Պատմություն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Ս. Մայիսսեանի, Թիֆլիս, 1907, էջ 350:

գործիցէ, ի բարւոք իրս պաշտեցաւ...»⁹, որոշ թարգմանություններում՝ «Եւ ոչ վայրապար ինչ ցուցանէ Ջաքարիասս զպատիժս գերանդոյն, զոր յոյնն մանգաղ ասէ»¹⁰, «Արդ քաղաքն այսպէս ողբալի և ողորմելի եղեալ. և որպէս գնա քակեաց գերանդին թռուցեալ, նոյնպէս և զամենայն տունս ուր երդումն լինիցին»¹¹ և այլն: Բառը շատ է գործածված Աստվածաշնչի գրքերում¹²: Վկայված է ա հողակապով բարդված գերանդազէն բառը. «Լիւսիաւ հանդերձ. մետասան բիրու վահանաւոր զօրու և հինգ հազար և երեքհարիւր հեծելազօր գնդաւ. և քսան և երկու փղովք. և երեքհարիւր գերանդազէն կառօք»¹³, «Իսկ Դարեհ, իբրև տեսանելով զԱղեքսանդր եկեալ ի վերայ նորա զաւրութիւն զաւրականին, կարկեցեալ գերանդազէն կառաւքն ընկրկել...»¹⁴: Բառը գործածված է նաև հետհինգերորդ դարյան մատենագիրների գործերում¹⁵:

Գերանդի բառանունն ընդգրկված է Հայերենի բարբառագիտական ասլասի (այսուհետև՝ ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրի «հնչյունական զուգարանություններ» բաժնում (հոդված 729):

Գերանդի տարբերակը գրանցվել է 8 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Սուշի (1՝ Բոշկ), Կարինի (1՝ Ծպնի /Կարս/), Երևանի կամ Արարատյան (6)

⁹ Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ - Ս. Ղազար, 1875, էջ 39:

¹⁰ Մերերիանոսի Եմեսացոյ Գարաղացոց եպիսկոպոսի Ճառք, Վենետիկ, 1830, Ճառ Զ, էջ 113:

¹¹ Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Ճառք, Վենետիկ - Ս. Ղազար, 1861, Ճառ ԺԹ, էջ 899: Բառանունը գործածվել է Ոսկեբերանի այլ գործերի թարգմանություններում ևս, օրինակ՝ «...զի ոչ ևս գերանդի թռուցեալ, և ոչ ցանգոյ քակել, և ոչ կոխան անցաւորաց լինել այգոյն, այլ տապար սրեալ...» (Նույնի՝ Յաւետարանագիրն Մատթէոս, հ. Բ, Վենետիկ - Ս. Ղազար, 1826, գիրք Ա, Ճառ ԺԱ, էջ 158):

¹² Տէ՛ս Ա Թագ. ԺԳ 20 («...թեքել իւրաքանչիւր զգերանդի իւր և զգործի իւր...»), Յովել. Գ 10 («...կոտորեցեք զխոփս ձեր ի տուներս, և զգերանդիս ձեր ի գեղարդունս»), Զաք. Ե 1-2 («Եւ դարձեալ ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա գերանդի թռուցեալ. և ասէ զիս՝ զի՞նչ տեսանես. և ասեմ, գերանդի թռուցեալ տեսանեմ ես...»), Յայտնութ. ԺԴ 14-16 («...և ի ձեռին իւրում ունէր գերանդի սրեալ...», «և ասէր... առաքեա զգերանդիդ քո՝ և հնձեա, զի եկն ժամանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի») (ըստ՝ Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, յաշիւ. Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, Վենետիկ - Ս. Ղազար, 1805):

¹³ Բ Մակ. ԺԳ 2:

¹⁴ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, աշիւ. Հ. Միմոնյանի, Ե., 1989, Բնագիր Ա, ՃԺԳ, էջ 156: Ի դեպ, նույնի Բ բնագրում գործածված է գերնդազէն բառը (նույն տեղում, էջ 389): Տէ՛ս նաև Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, Վենետիկ - Ս. Ղազար, 1842, էջ 57:

¹⁵ Տէ՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 310, Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ շնորհալոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. և անտի աւարտեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացոյ՝ որ և կոչի Ծործորեցի, Կ. Պօլիս, 1825, էջ 123, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն, Կ. Պօլիս, 1746, էջ 320, և այլն:

բարբառները, իսկ $\overset{1}{\text{գ}}\text{երանդի}$, $\overset{2}{\text{գ}}\text{երանդի}$, $\overset{3}{\text{գ}}\text{երանդի}$ հրնչաձևերը՝ 21 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Կարինի (2՝ Ցողամարգ, Կարմրաշեն /Արագածոտնի մարզ, ՎԲ/), Սեբաստիայի (1՝ Խուռնավիլ), Շապին Կարահիսարի (1՝ Շապին Կարահիսար), Ակնի (1՝ Ակն), Մուշի (3), Երևանի կամ Արարատյան (3), Ղարաբաղի (1՝ Փառակա /Նախիջևան/), Ագուլիսի (1՝ Տանակերտ), Խոյ-Մարաղայի (1՝ էլար /Վոտայքի մարզ, ՎԲ/), Ջուղայի (1՝ Մինագան /Չհարմահալ, Իրան/), պարսկահայոց (6) բարբառները:

Միսիանի Տոլորս և ԼՂՀ Ջազլիկ բնակավայրերում գործածվել է $\overset{1}{\text{գ}}\text{իրննդի}$ տարբերակը, իսկ Նախիջևանի Բիստ գյուղում՝ $\overset{1}{\text{գ}}\text{իրանթի}$ հնչաձևը:

Գրրննդի, $\overset{1}{\text{գ}}\text{րրանդի}$, $\overset{2}{\text{գ}}\text{րրննդի}$ ձևերն արձանագրվել են Ղազախ-Կիրովաբադի միջբարբառի Չովդարի և Ղարաբաղի բարբառի Վահանի (Գեղարքունիքի մարզ), Չինչինի և Թովուզի (Տավուշի մարզ) ենթախոսվածքներում: Կիրովաբադի խոսվածքում առկա է $\overset{1}{\text{գ}}\text{իրննդի}$ տարբերակը:

Գերրնդի, $\overset{1}{\text{գ}}\text{երրնդի}$, $\overset{2}{\text{գ}}\text{երրնդի}$, $\overset{3}{\text{գ}}\text{երրնդի}$, $\overset{4}{\text{գ}}\text{երրնդի}$, $\overset{5}{\text{գ}}\text{երրնդի}$, $\overset{6}{\text{գ}}\text{երրնդի}$ տարբերակներ են գրանցվել 106 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Պոլսի (1՝ Պարտիզակ) միջբարբառը, Մուշի (44), Կարինի (23), Տավորիկ-Մոսկանի (3), Դիադինի (3), Բայազետի (6), Երևանի կամ Արարատյան (15), Խոյ-Մարաղայի (9), պարսկահայոց (2՝ Շավրավա, Դաջան /Իրան/) բարբառները:

Գերանդու, $\overset{1}{\text{գ}}\text{երանդու}$, $\overset{2}{\text{գ}}\text{երրնդու}$, $\overset{3}{\text{գ}}\text{երանդու}$, գրրննդու, $\overset{1}{\text{գ}}\text{րրննդու}$, $\overset{2}{\text{գ}}\text{երանդու}$, գիրննդու, գիրննդու, $\overset{1}{\text{գ}}\text{իրննդու}$, $\overset{2}{\text{գ}}\text{իրննդու}$ հնչաձևեր են փաստվել 29 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Ղազախ-Կիրովաբադի միջբարբառը (3), Մուշի (1՝ Վարդաբլուր /Լոռու մարզ, ՎԲ/), Բայազետի (1՝ Արծափ), Երևանի կամ Արարատյան (11), Ղարաբաղի (13) բարբառները: Օջականի խոսվածքում գրանցվել են ն հնչյունի հավելմամբ $\overset{1}{\text{գ}}\text{երանդուն}$ և բառասկզբի $\text{գ} > \text{ջ}$ հրնչյունափոխությամբ $\overset{1}{\text{գ}}\text{երանդուն}$ եզակի ձևերը:

Բառասկզբի $\text{գ} > \text{ճ}$ հնչյունափոխությամբ բառաձև է արձանագրվել Ագայի (Նախիջևանի տարածաշրջան) ենթախոսվածքում՝ ճերանդի: Ի դեպ, նույն ենթախոսվածքում արձանագրվել է նաև ջնլ ննթի տարբերակը՝ $\text{գ} > \text{ջ}$, $\text{ե} > \text{ն}$, $\text{ր} > \text{լ}$, $\text{դ} > \text{թ}$ անցումներով:

Վանի բարբառի Խալենցի և Կճավի ենթախոսվածքներում առկա է $\overset{1}{\text{գ}}\text{երրնդի}$ ձևը, իսկ Մամոտանց գյուղախմբի (Միջա, Կունիս, Ապարանց, Սեղ) ենթախոսվածքներում՝ $\overset{1}{\text{գ}}\text{երրնդի}$ ձևը:

Կերանդի, $\overset{1}{\text{գ}}\text{երանդի}$ հնչաձևերն արձանագրվել են Խարբերդ-Երզրնկայի (1՝ Նագարան), Վանի (2՝ Խաչան, Դոնաշեն), Մուշի

(1՝ Ռստամ-Գեղուկ), Մասունի (1՝ Քոփ), Երևանի կամ Արարատյան (5), Խոյ-Մարադայի (3), Ղարաբաղի (1՝ Բոլնիս Խաչեն) բարբառների խոսվածքներում ու ենթախոսվածքներում: Հայերենի բարբառների 80 խոսվածքներում ու ենթախոսվածքներում գրանցվել են կերբնդի, կերբնդի, կերբնդի, կերբնդի ձևերը՝ ընդգրկելով Եվրոկիայի (1՝ Եվրոկիա), Պոլսի (1՝ Պարտիզակ) միջբարբառները, Խարբերդ-Երզնկայի (1՝ Երզնկա), Կարինի (4), Մուշի (5), Մասունի (12), Տալվորիկ-Մոտկանի (7), Վանի (23), Խոյ-Մարադայի (21), Երևանի կամ Արարատյան (4), Ջուղայի (1՝ Հին Ջուղա) բարբառները:

Կարինի բարբառի 8 և Խոյ-Մարադայի բարբառի Թաղիաբաղի ենթախոսվածքներում արձանագրվել է կերբնոտի բառը:

Մասունի բարբառի Գեյիեգուզանի խոսվածքում, Տալվորիկ-Մոտկանի բարբառի Սեմայի, Կրխուի և Հոսների ենթախոսվածքներում փաստվել է կերբնդը տարբերակը: Կերանդու ձևը գործածվել է Առինջ (Կոտայքի մարզ) և Ծաղկունք ու Շահումյան (Արմավիրի մարզ) բնակավայրերում: Ղազախ-Կիրովաբաղի միջբարբառի Լղարակի ենթախոսվածքում առկա է կրբանդի ձևը:

Նախիջևանի տարածաշրջանի որոշ բնակավայրերում գրանցվել են Քյւրանթի (Շուռութ, Կյաղ), Քյւրյւննթու (Ազնաբերդ), Քյւրյւննթի (Մեծոփ, Մեսրոպավան), քյւրյւննթի (Փարադաշ) տարբերակները: Քյւրյւննթի հնչաձևը փաստվել է նաև Կոզենի բարբառում: Ղազախ-Կիրովաբաղի միջբարբառի Խանլարի ենթախոսվածքում արձանագրվել է քյւրյւննթու բառը: ԼՂՇ Մարադա գյուղում գործածվել է Քյւրյւննթի (ր > լ հնչյունափոխությամբ) բառը, իսկ քյւրանթի, քյւրանթու, քյւրլանթու ձևերը գործածվել են համապատասխանաբար Ղարադաղի տարածաշրջանի (Իրան) Խանազահ, Ուրգութուն և Նորաշեն բնակավայրերում:

Առանձին տարբերակներ են արձանագրվել Խարբերդի Սվջող (քերբնդի), Տրապիզոնի Ծինգիր և Միմեր (քերանդի), Վայոց ձորի մարզի Խաչիկ և Աղավնաձոր (քերանթու) բնակավայրերում:

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ նշված են ՀԲԱ նյութերում չգրանցված հնչաձևեր: Վերջիններս գործածվել են Բալուի (գերբնոտու)¹⁶, Համշենի բարբառի Խոփայի (քերենդ)¹⁷ ենթախոսվածքներում, Գորիսի (գյւրյւննդի// կյւրյւննդի)¹⁸, Դերսիմի (կերբնդու)¹⁹, Ղարադաղի (քյւրանթու)²⁰ խոսվածքներում: Հ. Աճառյանը վկայել է քերենդի ձևի

¹⁶ Տե՛ս Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, աշխատասիրեց Յարութիւն քին. Մարգիսեան /Ալեւոր/, Գահիրէ, 1932, էջ 375:

¹⁷ Վարդանյան Ս., Կրոնափոխի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Ե., 2009, էջ 92:

¹⁸ Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 41, 319:

¹⁹ Բաղրամյան Ռ. Հ., Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., 1960, էջ 76:

²⁰ Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը, հ. 1, Ազգագրություն, Ե., 2009, էջ 628:

գործածությունը Համշենի բարբառում, իսկ Վանի բարբառի որոշ խոսվածքներում արձանագրել էր էրնդը՝ (Մոկք) և գի՛յէրնդէ (Ոզմ) տարբերակները²¹: Միվրիհիսարի խոսվածքում արձանագրված է կերանտի ձևը²²: Գեղարքունիքի մարզի Նորատուս և Ծովագյուղ բնակավայրերում համապատասխանաբար գործածվել են ջերնդի և ջերնդու բառաձևերը²³:

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ արձանագրված են նաև բառակազմական տարբերակներ: Հ. Աճառյանը վկայել է գերանդուաբաղ «գերանդիով հնձած» բարդ բառի գործածությունը Երևանի բարբառում²⁴: Նույն բարբառում գրանցված է նաև գերանդվոր «գերանդիով հնձող» ածանցավոր բառը և գերանդի քաշել «հնձել» արտահայտությունը²⁵: Ս. Վարդանյանը Համշենի բարբառի Խոփայի ենթախոսվածքում արձանագրել է քերէնդին հեղը «հնձելիս՝ մանգաղի և գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը» բառակապակցությունը²⁶: Գրանցվել են նաև գերանդի բառով կազմված արտահայտություններ ու դարձվածքներ: Հ. Աճառյանը արձանագրել է գերանդու ածել (Ղազախ) «ծուռ քալել. Ոտները ման գալիս գերանդու էր ածում» և գերանդի չբռնել (Ախալքալաք) «ցորենը արդեն կծղած ըլլալով այլ ևս չկտրուիլը. Արտը կծղեր է, գերանդի չի բռներ» արտահայտությունները²⁷: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» վկայել է գերանդին քարին առնել «անհաջողության հանդիպել, ի վիճակի չլինել գործը զլուխ բերելու» արտահայտությունը՝ առանց բարբառը նշելու²⁸:

Ինչպես նշվել է, «գերանդի» հասկացությունն ընդգրկված է ՀՖԱ նյութերի հավաքման ծրագրի «հնչյունական զուգարանություններ» բաժնում, սակայն ունի ՀՖԱ նյութերում գրանցված մի քանի բառային տարբերակներ՝ դարյազ, թըրպան // թըրփան և այլն:

Դարյազ-Բառանվան ստուգաբանությունը հայերենի բառարաններում և գրականության մեջ չենք գտել: Կարծում ենք, որ այն ծագում է պարսկերեն dāra, dahra «մանգաղ» ձևից²⁹:

²¹ Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 224, նույնի՝ Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 58, 253:

²² Մկրտչյան Ն. Ա., Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, Ե., 2006, էջ 480:

²³ Բաղդասյան Ռ. Հ., Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 199:

²⁴ Աճառեան Հ., Հայերեն գուլառական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ) (= Էմիլեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 225:

²⁵ Բաղդասյան-Թափալցյան Ս. Հ., Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973 էջ 225, 262:

²⁶ Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 92:

²⁷ Տե՛ս ՀԳԲ, էջ 225:

²⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 240:

²⁹ Տե՛ս Расторгуева В. С., Эдельман Д. И. Этимологический словарь иранских языков, т. 2, М., 2003, с. 440-441, Tietze A., Persian Loanwords in Anatolian Turkish (Oriens, 20(1967), p. 141): Ի դեպ, պարսկերենից ծագող այդ բառը նույն նշանակությամբ գործածական է աղբրեջաներենում՝

ՀԲԱ նյութերում դարյազ բառաձևը «գերանդի» նշանակությամբ գրանցվել է Ղարաբաղի բարբառի 20 (ԼՂՀ բնակավայրեր) խոսվածքներում ու ենթախոսվածքներում: Նույն բարբառի Եմիշճանի ու Մեծ շենի (ԼՂՀ) և Վինանի (Ղարադաղի) ենթախոսվածքներում առկա է դրբյազ ձևը: Արձանագրվել են նաև դիմրյազ (Զագլիկ /ԼՂՀ/), դրժրյազ (Սադյան /Շամախի, Ադրբեջան/) հնչաձևերը:

Կ. Դավթյանը բառը վկայել է նաև Մեհտիշենի բարբառում և Խոյ-Սարադայի բարբառի Չայլուի (Սյգեստան) ու Մարադայի (ԼՂՀ) ենթախոսվածքներում³⁰: Բառն առկա է նաև Արեշի խոսվածքում³¹: Ղարաբաղի բարբառում արձանագրվել են դրբյազավեր «գերանդի ունեցող» ածանցավոր ձևը³² և դրբյազ ածել «գերանդիով խոտ հարել» արտահայտությունը³³: Նույն բարբառում վկայված է նաև Դարյազը քարեն նի կյալ «անհաջողության հանդիպել, գործը ձախողվել» դարձվածքը³⁴:

Թրրպան // թրրփան³⁵ - ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 1 խոսվածքում և 9 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Պուսի (1՝ Ռոդոսթո), Խարբերդ-Երզնկայի (1՝ Հաբուսի), Մուշի (2՝ Լիզ, Քոշկ), Վանի (1՝ Նոր գեղ), Կարինի (1՝ Ջուլդա, Ծղայթբիլա /Վրաստան/), Դիադինի (1՝ Ջուջան), Բայազետի (1՝ Արծափ), Խոյի (2՝ Կարակրզ, Բադիլբո /Իրան/) բարբառները: Օրդուի խոսվածքում, Չիբլուխուի (Օրդու) և Օրմոնբոյի (Համշենի) ենթախոսվածքներում արձանագրվել է թրրպոն հնչաձևը: Եզակի ձևեր են գրանցվել Վանի բարբառի Գոմսի /թրրփան/ և Մարմետի ու Պողանցի /թրրմփան/ ենթախոսվածքներում:

Ն. Մկրտչյանը Գամիրքի խոսվածքում արձանագրել է թրրփան բառով կազմված թրրփան գարնել արտահայտությունը ինչպես «հրնձել» նշանակությամբ, այնպես էլ փոխաբերական՝ «մաքրել, վերջացնել»

dəryaz (տե՛ս Azərbaycan dilinin izahli lügəti, Bakı, 2006, c. 1, s. 600). բառարանում մեկնվող բառերի դիմաց նշվում է փոխառության աղբյուրը, սակայն այս բառի դիմաց փոխառության աղբյուրի վերաբերյալ ոչինչ չի նշվում, ըստ երևույթին, հեղինակներն այն համարում են ադրբեջաներեն բառ:

³⁰ Տե՛ս Դավթյան Կ. Ս., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 333:

³¹ Տե՛ս Լուսենց Ա. Ղ., Արեշի բարբառը, Ե., 1982, էջ 169:

³² Տե՛ս Բաղդասարյան Գ., Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան, հ. Ա, Ստեփանակերտ, 2008, էջ 124:

³³ Տե՛ս Նշխարներ Արցախի բանահյուսության, կազմող՝ Լ. Հարությունյան, Ե., 1991, էջ 268:

³⁴ Տե՛ս Բաղդասարյան Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 124:

³⁵ Այս բառանվան մասին ավելի մանրամասն տե՛ս Աբրահամյան Ա. Ա., Հայերենի բարբառներում առկա «թրրպան» բառանվան շուրջ (Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, N 3, էջ 279-283):

իմաստով («Մեղանին վրբան պանըմն է մրնացած չէ, կիտէս քի թըրփան զարկէր ին»)՝³⁶:

Հայերենի բառարաններում և բարբառագիտական գրականության մեջ բառի ստուգաբանությունը չենք գտել: Անկասկած, այն փոխառյալ է թուրքերեն *ıvrān* «մանգաղ, գերանդի» բառից³⁷: Ինչ վերաբերում է թուրքերենի փոխառության աղբյուրին, ապա Ս. Նշանյանը, որը թուրքերենի ստուգաբանական բառարանի հեղինակ է³⁸, համացանցում դրված տարբերակում նշում է, որ այն ծագում է հունարեն *δρέπανον* «մանգաղ» ձևից³⁹:

ՀԲԱ նյութերում արձանագրվել են նաև «գերանդի» նշանակությամբ հանդիպող այլ բառանուններ, որոնք հայերենի բարբառներում հիմնականում ունեն «մանգաղ» նշանակությունը՝ մանգաղ (3՝ Մարաշ, Հալնձի /Մուշ/, Ալիջան /Մուրմալու/), մնրննդի (1՝ Մոլլադամար /Մուրմալու/), օրօղ (1՝ Մարաշ):

Այսպիսով, դաշտահավաքի աշխատանքներում կարևոր դեր ունեցող գերանդի գործիքը հայերենի բարբառներում ունեցել է 6 անվանում:

Ըստ ՀԲԱ նյութերի՝ տարածքային լայն ընդգրկում ունի գերանդի բառանունը՝ իր հնչյունական տարբերակներով (302 խոսվածք և ենթախոսվածք), տարածքային սահմանափակ ընդգրկում ունեն դարյազ (25) և թըրպան // թըրփան (15) բառաձևերը՝ իրենց հնչյունական տարբերակներով, եզակիների թվին են դասվում մանգաղ (3), մնրննդի (1), օրօղ (1) ձևերը:

Նշվածների թվում միայն հ.-ե. արմատներ ունեցող բառեր չկան, 4-ը փոխառություն են այլ լեզուներից (ասոր. մանգաղ, պարսկ.՝ դարյազ, թուրք.՝ թըրպան // թըրփան, օրօղ), 2-ը ստուգաբանված չեն կամ ունեն կասկածելի ստուգաբանություն (գերանդի, մարանդի):

Ըստ հետազոտության արդյունքների՝ «գերանդի» հասկացության բառային 6 տարբերակներից Մուշի, Խոյ-Մարադայի և Բայազետի բարբառներում գործածվել են 3-ական, իսկ մյուսներում՝ 1-ը կամ 2-ը:

Գերանդի բառը գործածվել է 23 բարբառներում, թըրպան// թըրփան բառը՝ 9 բարբառներում, դարյազ-ը («գերանդի» նշանակությամբ)՝ 5 բարբառներում, մանգաղ-ը («գերանդի» նշանակությամբ)՝ 3 բարբառներում, օրօղ և մնրննդի բառերից յուրաքանչյուրը («գերանդի» նշանակությամբ)՝ 1 բարբառում:

³⁶ Տե՛ս Մկրտչյան Ն. Ա., նշվ. աշխ., էջ 409:

³⁷ Տե՛ս Համառոտ բառարան տաճկերէն-հայերէն, Յորինեալ ի Զ. Յակովբոս Վ. Պոզաճեան, Վիլննա, 1858, էջ 240, Турецко-русский словарь, составил Магазаник Д.А., М., 1945, с. 623:

³⁸ Տե՛ս Nişanyan S. Sözlerin Soyağacı: Çağdaş Türkçenin Etimolojik Sözlüğü, İstanbul, 2007:

³⁹ Տե՛ս <http://www.nisanyansozluk.com/?k=t%C4%B1rpan>

НАИМЕНОВАНИЯ ПОНЯТИЯ “GERANDI”
(КОСА) В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

АБРААМЯН А. А.

Резюме

Коса играла важную роль в инструментарии армянских земледельцев. В армянских диалектах понятие “коса” имело разные наименования – **gerandi**, **daryaz**, **t‘erpan** и т. д. Наиболее широкое распространение получило наименование **gerandi** (в материалах “Диалектологического атласа армянского языка” зафиксировано примерно в 300 говорах армянских диалектов), менее распространены **daryaz** (25), **t‘erpan** (15) (в их фонетических разновидностях). К числу редко встречающихся наименований следует отнести **mangał** (3), **märändi** (1), **oroł** (1).